Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՈՐՈՏՆԱՎԱՆՔԻ ԽԵՑԵՂԵՆԸ

1965 թ. գարնանը Սիսիանի շրջանում Որոտնավանք այցելելու ժամանակ Սեդրակ Բարխուդարյանը մեր ուշադրությունը հրավիրեց 1931 թ. երկրաշարժի ժամանակ փուլ եկած սուրբ Կարապետ եկեղեցու ծածկի շաղախի մեջ առկա խեցեղենի վրա։ Խեցանոթների այդպիսի բազմաքանակություն և բազմատեսակություն եկեղեցու շաղախի մեջ տվյալ դեպքում մեր պրակտիկայում առաջին անգամ էր հանդիպում։ Խեցեղենի բացարձակ թվագրությունը և ձևերի տարատեսակությունը որոշ հետաքրքրություն առաջ բերեցին նրանց ուսումնասիրության ուղղությամբ։ Նույն թվականի ամռանը կատարվեցին մասնակի պեղումներ Որոտնավանքի ս. Կարապետ եկեղեցու հարավային փուլ եկած մասում։

Եկեղեցին կառուցվել է XI դարի սկզբին, ավելի ստույգ 1007 թ.։ Կառուցման վերաբերյալ վկայություն է պահպանվել Ստեփանոս Օրբելյանի մոտ։ Նա գրում է. «Ապա յետ ամաց ինչ ի 455 թուականին Սեւադայ՝ որդի Նորին Շահանդխտոյ՝ եղբայր Վասակայ թագաւորի, շինէ և մեծածախ աշխատութեամբ եկեղեցի մի յոյժ պայծառ և գեղեցկայարմար գմբեթայարկ յանուն սրբոյ Կարապետին»[1]։ Եկեղեցին ունի նաև անթվակիր շինարարական եղծված արձանագրություն[2]։ Այսպիսով, եկեղեցու կառուցման և շինարարության մեջ օգտագործված խեցեղենի ժամանակաշրջանը ոչ մի կասկածի տեղիք չի տալիս։

Ընդհանրապես խեցանոթների կիրառումը շինարարության մեջ հայտնի է շատ հին ժամանակներից։ Դեռ անտիկ շրջանում, Հռոմի կրկեսում, խեցանոթները օգտագործվել են ձայնի հնչեղության համար; իսկ միջին դարերում լայն տարածում են ստանում եկեղեցական կառուցվածքներում։

Ն. Մ. Տոկարսկին գտնում է, որ Հայաստանում կառուցողական այդ եղանակը հանդես է եկել ավելի վաղ ժամանակներում, չնայած ոչ մի հուշարձանի վրա առայժմ չի դիտվում։ X—XI դարերում Հայաստանում լայն տարածում է ստանում ծածկի լիցքը (շաղախը) թեթևացնելու այդ եղանակը։ Դա պարզ կերպով նկատվում է Անբերդում Վահրամ Պահլավունու կողմից 1026 թ. կառուցված եկեղեցու արևմտյան թևի կիսաքանդ տանիքի տակ, որտեղ շարքով, թաղի ուղղությամբ, շաղախի մեջ թաղված են կարասներ։ Շաղախի մեջ խեցանոթների բեկորներ գտնվել են Անիում՝ Առաքելոց եկեղեցու պեղումների ընթացքում։ Խեցեղենի նման կիրառությունն նկատվել է նաև Գառնիում՝ խու-

---

1 «Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 302։

2 Գիտական հրատարակությունը տե՛ս «Դիվան հայ վիմագրության», 2-րդ պրակ. կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1960, էջ 99։

3 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, стр. 178.

Նկ. 1. Որոտնավանքի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից։ Ձախ կողմում փուլ եկած ս. Կարապետ եկեղեցին

Նկ. 2. Ս. Կարապետ. եկեղեցու ընդհանուր տեսքը հարավից



Նկ. 3. Շաղախի մեջ կպած տարբեր բեկորներ

Նկ. 4. Շաղախի մեջ կպած տարբեր տիպի անոթների բեկորներ

մարաժամի 1964 և 1965 թվականների պեղումների ժամանակ։ Թաղի վրա ընկնող ծանրությունը թեթևացնելու նպատակով շաղախի մեջ խեցանոթներ դնելու տեխնիկան լայն տարածում է ստացել Սյունիքի հուշարձաններում, որը մեծ քանակությամբ դիտվել է Տաթևում և Հայրավանքում (Սևանի ափին)։

Ն. Մ. Տոկարսկին շինարարության մեջ խեցանոթների օգտագործմանը տալիս է զուտ կոնստրուկտիվ նշանակություն, ժխտելով նրանց ձայնային դերը[4]։ Չհամաձայնվելով այս վերջին դրույթին, մենք կաշխատենք նյութի հետագա շարադրման ընթացքում բերել ստույգ ապացույցներ՝ հակառակ տեսակետը պաշտպանելու համար։

Ինչպես նկատեցինք, Որոտնավանքում խեցեղենը աչքի է ընկնում իր ձևերի բազմազանությամբ։ Շաղախի մեջ դրվել են ամեն տեսակի անոթներ, սկսած փոքր կճուճներից՝ վերջացրած կարասներով։ Պեղումների ընթացքում ձեռք բերած նյութը մեզ լրիվ հնարավորություն է ընձեռում ստորաբաժանել դրանք և առանձին դիտողություններ անել տեղական առանձնահատկությունների վերաբերյալ։

Ամբողջ խեցեղենը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ կենցաղային և շինարարական։ Կենցաղային խեցեղենի մեջ մտնում են կարասները, տաշտերը, ձգումները, կովկիթները և այլ անոթներ։

Կարասներ.— Հիմնականում փոքրադիր են, մոտ 60—70 սմ բարձրությամբ։ Հանդես են գալիս մի քանի ձևերով։ Մի մասը ունի կլոր պսակ, որի տակ դրսից սուր գործիքի օգնությամբ շուրջանակի արված են ալիքաձև խորը զարդեր։ Կարասների այս ձևում գերազանցապես բացակայում է վիզը, մարմինը ուռուցիկ է (տախտակ I, նկ. 1, 2, 4, 6, 10, 12)։

Կարասների մի այլ խումբ ունի հարթ պսակ և ուղիղ երկար վիզ, որի արտաքին մասում արված է ալիքաձև զարդ և շուրջանակի գնացող թմբիկ (տախտ. I, նկ. 9, 11)։

Դրանց ուղղակի զուգահեռները հանդիպում են Դվինի և Գառնիի IX—XI դարերի շերտերում։ Նույնատիպ կարասներ, մեծ քանակությամբ՝ գտնված են Նոր Արմավիրում (Դալթի սար)[5]։ Կարասների մեջ իրենց զարդաձևերով աչքի են ընկնում դրոշմազարդ կարասի բեկորները։ Մարմնի կենտրոնական մասում, հյուսածո ուռուցիկ գոտիների միջև, շրջանաձև կամ բոլորակ դրոշմի միջոցով վերարտադրված է մի զարդագոտի (տախտ. I, նկ. 14), որը լայն տարածում ունի Հայաստանի միջնադարյան հնավայրերից հայտնի նման տիպի կարասների վրա և իր ձևով բուսական ու կենդանական դաջերով հանրահայտ կարասների նախատիպը կարող է հանդիսանալ։ Այդ ձևերի առաջացումը կարելի է դնել X դ. սկզբին։ Ըստ երևույթին, ճիշտ են այն ուսումնասիրողները, որոնք դաջազարդ կարասները թվագրում են X—XI դարերին, քանի որ նման տեխնիկայի առաջացումը, պետք է որոշակի հող ունենար նախորդ դարաշրջանում[6]։

---

4 Նույն տեղում։

5 Նյութերը հրատարակված չեն և գտնվում են Հայաստանի պետական պատմական թանգարանում։

6 Նույն տեսակետին են նաև Կ. Ղաֆադարյանը «Դվին քաղաքը և նրա պեղումները», Երևան, 1952, էջ 197 և Բ. Առաքելյանը «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում», հ. I, Երևան, 1958, էջ 227։ Վ. Լևիատովը և Գ. Ախմեդովը այն թվագրում են XII—XIII դդ.(տե՛ս В. Н. Левиатов, Украшение на карасах из Старой Гянджи, Изв. АН


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
Surowiec I

Տաշտեր.— Զանազանվում են իրենց պատրաստման եղանակով և շրթերի ձևավորումով, ներքուստ և արտաքուստ ունեն ճոխ հարդարանք։ Դրանք 52 սմ բացվածք ունեցող բերանով, 15—20 սմ բարձրությամբ (հատակի տրամագիծը 25 սմ) անոթներ են դեպի ներս թեքված պսակով։ Տաշտերից մեկը ներսի կողմից հատակի վրա ունի շրջանագծի մեջ վերցված, իրար հատող քառակուսիներ, որի հետևանքով առաջացել է ութ թևանի աստղ (տախտ. I, նկ. 5)։ Ներսի կողմից, պատերի վրա ունի ալիքաձև փորագիր զարդ, ամբողջ մակերեսը դրսից և ներսից, շերտ-շերտ, ներկված և փայլեցված է կարմիր ներկով։

Նման անոթներ մեզ առայժմ հայտնի են Գառնիի վաղ միջնադարյան շերտերից։ Ըստ երևույթին այդ տրադիցիան շարունակվել է նաև հետագա դարերում։ Որոտնավանքի տաշտը Գառնիի ձևերի ավելի ուշ ընդօրինակությունն է։

Ութ թևանի աստղաձև զարդը լայն տարածում ունի միջնադարյան խեցեղենի և ճարտարապետական հուշարձանների վրա։ Նույն զարդով կարասի մի բեկոր հայտնի է Գառնիից (Ալ. Սահինյանի 1965 թ. պեղումները Խումարաժամում), ինչպես նաև Որոտնավանքի սուրբ Ստեփանոս եկեղեցու սրահում ընկած, հավանաբար եկեղեցուն պատկանող, արձանագիր քարի մի բեկորի վրա՝։

Զոումներ.— Հայտնի է երեք բեկոր, մեկը տափակ հորիզոնական կանթով, որի ձախ կողմում նկատելի է անցքը։ Մյուս բեկորը մասսիվ, կլոր հորիզոնական կանթ է։ Զձումներն իրենց վրա կրել են փորագիր ալիքաձև և կարմրաներկ զարդեր (տախտ. II, նկ. 12—14)։ Բեկորներից մեկի վրա պահպանվել է անցքը փակող փայտը (տախտ. II, նկ. 14)։

Կժեր.—Հիմնականում կարմրախեցուց են։ Հանդես են գալիս երկու տիպով։ Լայն բերանով կժերը, որոնց համար պարտադիր է փոքրիկ կանթը, ունեն կլոր, քիչ ետ փռված պսակ և կարճ վիզ, որի վրայով անցնում է ուռուցիկ շուրջանակի զարդ (տախտ. II, նկ. 8, 11)։ Նեղ բերանով կժերը ունեն համեմատաբար երկար վիզ և մասսիվ կանթ։ Կանթերի մի մասը զարդարուն է (տախտ. II, նկ. 1, 4)։

Կովկիրներ.— Ինքնատիպ անոթներ են, առանց պսակի և կանթի, նախշազարդումից զուրկ։ Ունեն բավականին լայն բերաններ, անոթները խորը չեն։ Բեկորներով դժվար է որոշել անոթների ճշգրիտ չափերը։ Մեծ մասամբ պահպանվել են շուրթերը (տախտ. II, նկ. 7, 10, 15—17)։ Նման տիպի անոթներ հայտնի չեն մինչև այժմ պեղվող Հայաստանի միջնադարյան հնավայրերում։

Ակներևաբար այդ անոթների վրա զգացվում է տեղական ազդեցությունների կնիքը։ Անոթները պատրաստվել են ելնելով զուտ տեղական պայման-

---

Аз. ССР, 1945, № 8; Г. М. Ахмедов, Неполивная керамика Орен-Кала IX—XIII вв., МИА, № 67).

Զառարկելով այդ թվագրմանը, շեշտում ենք, որ միջնադարյան Հայաստանի ծայրամասային շրջաններում և անմիջապես նրանց կից մարզերում այդ տեխնիկան ավելի ուշ է զարգանում և մեծ մասամբ ընդօրինակում է Դվինի և Անիի ձևերը, որոշ չափով ելնելով նաև տեղական առանձնահատկություններից։ Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ Գանձակում և Փայտակարանում, որտեղից հայտնաբերվել են զգալի թվով գաչազարդ կարասներ, հիմնական արտադրողը մնում էր հայ արհեստավորը, որն իր սեփական արտադրության մեջ ստեղծագործարար կիրառում էր Դվինի և Անիի փորձը։

7 «Դվիան հայ վիմագրության», 2-րդ, տախտակ XXIX, նկ. 113։



Տախտակ II

ներիս՝ մեզ թվում է, որ այստեղ կարևոր դեր է խաղում Սյունիքի անասնապահական երկրամաս լինելը։

Սափորներ.— Հանդիպում են հիմնականում երկու տիպի՝ բաց դեղնավուն գույնի կավից պատրաստված փոքր սափորներ և կարմրագույն, եռաթերթ բերան ունեցող սափորներ։

Առաջին տիպը (պահպանվել են աննշան բեկորներ) ունի լավ մշակում։ Սափորների բերանի պսակը կլոր է, երկար վզի կենտրոնով ձգվում է սանրաձև ալիքավոր զարդ, իրանը ուռուցիկ է, և նույնպես կրում է սանրով արված զարդագոտի։ Կանթը փոքր է, վերին մասով միանում է վզի կենտրոնին (տախտ. II, նկ. 3)։

Ձևավոր բերանով սափորները լայն տարածում են ունեցել։ Պահպանված երկու մեծ բեկորները, բերանի և կանթի հետ միասին, տալիս են նրանց ընդհանուր պատկերը։ Նրանք ունեցել են համեմատաբար կարճ վիզ (բերանի բացվ. 6 սմ)։ տափակ կանթ, որը միանում է անմիջապես պսակին։ Անոթներն իրենց վրա կրում են տարբեր տիպի փորագիր զարդեր (տախտ. II, նկ. 2, 5)։

Նման սափորները լայնորեն հայտնի են Հայաստանի միջնադարյան հնավայրերից հայտնաբերված X—XI դդ. նյութերի մեջ։

Նկարագրված սափորների վրա շաղախի ոչ մի հետք չի նշմարվում։ Ըստ երևույթին նման սափորները ամբողջական ձևով դրված են եղել ոչ միայն շաղախի մեջ, այլ շարվել են եկեղեցու չորս թևերում՝ ծածկի և թաղի միջև առկա բաց տարածության մեջ։ Ականատեսները պատմում են, որ եկեղեցու փուլ գալուց հետո, նրա հյուսիսային խորանի ծածկի տակ երևում էին ամբողջական սափորներ՝ կանգնած վիճակում (մինչև այժմ էլ մնացորդները պահպանվել են)։ Այս հանգամանքը մի անգամ ևս ապացուցում է, որ սափորները դրվել են ձայնի հնչեղության համար։

Կճուճներ.— Տարատեսակները շատ են, ընդհանուր առմամբ ոչ խորը, լայն բերանով, կարմրավուն կավից (մրապատ) անոթներ են։ Պսակները կիսակլոր են և դուրս են թեքված։ Որոշ օրինակների վրա, վզի կենտրոնական մասով անցնում են առ և ակոսներ։ Կանթերը հանդես են գալիս տարբեր ձևերով՝ կլոր, որոնք մեծ տարածում ունեն միջնադարյան հուշարձաններում, քառակող կանթեր, որոնք հորիզոնական դիրքով անմիջապես միացած են պսակի տակ։ Կանթերի մի մասը մասսիվ է և իր վրա կրում է տարբեր զարդանախշեր։ Կճուճները գերազանցապես հաստապատ են (տախտ. III, նկ. 16)։

Կճուճների մի խումբն ունի համեմատաբար ոչ լայն բերան, կարճ վիզ, դեպի դուրս փռվող կլոր պսակ։ Այս տիպի անոթները զուրկ են զարդերից և կրում են խուլ կանթեր (տախտ. III։ նկ. 5)։

Մյուս խումբը ներկայացված է նեղ բերանով և երկար վզով, անկանթ, վառ կարմրավուն անոթներից։ Կճուճների այս խմբի իրանները կլոր են, պրսակները՝ հաստ և ետ փռված (տախտ. III, նկ. 4)։

Որոտնավանքի խեցեղենի զարդարման եղանակները նույնն են, ինչ որ հայկական մյուս ժամանակակիցներ հուշարձաններում։ Զարդարման ամենատարածված եղանակը փորագրությունն է, որը կատարվում է սուր գործիքի օգնությամբ։ Այդ եղանակով արված են տարբեր տիպի գոտիներ, օղակներ և թեք փոսիկներ, սանրի օգնությամբ արված ուղիղ և ալիքաձև զարդեր։ Փորագրման եղանակով վերարտադրված են տարբեր երկրաչափական պատկերներ։


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
0 5 10
Sufurwuly III

Դրոշմազարդման տեխնիկան հանդիպում է միայն մեկ օրինակի վրա։ Դրոշմը կատարված է բոլորակ կնիքով։

Սափորների, տաշտերի և կարասների առանձին օրինակների վրա նկատելի է գունազարդում կարմիր ներկով։ Անոթների մի մասը ներկվելուց հետո փայլեցվել է։ Այն տեխնիկան, որի առաջացումը և զարգացումը խորը արմատներ ունի, նախորդ դարաշրջանների տրադիցիայի սոսկ թույլ և աղճատված վերարտադրությունն է։

Շինարարական խեցեղեն.—Սուրբ Կարապետ եկեղեցուն կից XIII դարում կառուցվել է սյունասրահ, որի ծածկի մի մասը փուլ է եկել։ Պահպանված մասում նկատվում են կղմինդրներ, որոնք թվագրվում են սյունասրահի կառուցման ժամանակով։ Միաժամանակ եկեղեցու հյուսիս-արևելյան կողմում պահպանված ավանդական ծածկը նույնպես պատած է կղմինդրով, այն կրկնում է XII դարի ձևերը։ Ավանդական ծածկը հավանաբար նորոգվել է XIII դարում։

Կղմինդրները երկու տեսակ են՝ հարթ և կիսաբոլոր։ Հարթ կղմինդրները (չափսերն են՝ երկարությունը 40 սմ, ստորին մասի լայնությունը 24 սմ, վերին մասի լայնությունը 32 սմ. բարձրությունը 6 սմ, հաստությունը 3 սմ։ պատրաստված են խոշորահատիկ կավից, ունեն վատ մշակում։ Կիսաբոլոր կղմինդրները նեղ, ստորին մասում արտաքուստ ունեն բարձր ելուստ, որն արված է հաջորդի մեջ հագնելու համար (տախտ. III, նկ. 15, 17)։

Որոտնավանքի ընդհանուր կոմպլեքսում գտնվող սուրբ Կարապետ եկեղեցու շաղախի մեջ դրված խեցեղենը թվագրվում է եկեղեցու կառուցման ժամանակաշրջանով՝ X—XI դարեր։

Եկեղեցու ճարտարապետության մեջ խեցեղենի օգտագործումն ունի ոչ միայն կոնստրուկտիվ նշանակություն. այն դրվել է նաև ձայնի հնչեղության համար (голосники)։

Որոտնավանքի խեցեղենը ստույգ թվագրված բաղդատական նյութ է մեր միջնադարյան հուշարձաններում հայտնաբերված նմանօրինակ նյութերի համար։